



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11

էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 012

« 24 » Նոյեմբերի 2015թ

ՀՀ Բնապահպանության նախարար
պարոն Արամայիս Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

17.11.2015թ. ՀՀ բնապահպանության նախարարությունում կայացած աշխատանքային խորհրդակցության ժամանակ քննարկվել են Սևանա լճում ձկան և խեցգետնի որսի արգելման ժամանակահատվածում իրականացվելիք երեք գերատեսչությունների (ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան) համատեղ միջոցառումների ծրագրով նախատեսված փոխգործակցության մեխանիզմները:

Քննարկվել են նաև արգելքի հիմքերը, այն է՝ Հիմք ընդունելով ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N2459-161 գրությունը՝ նոյեմբերի 4-ին ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի "Սևանա լճում ձկան բնական վերարտադրության ժամանակահատվածում իրականացվող միջոցառումների մասին" թիվ 320-Ս հրամանը: Հրամանով նախատեսված է իշխան և սիգ ձկնատեսակների ձկադրման ժամանակահատվածում ձկների բնական վերարտադրությունն ապահովելու նպատակով 2015 թվականի նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 25-ը և 2016 թվականի հունվարի 6-ից մինչև հունվարի 20-ը ժամանակավորապես դադարեցնել Սևանա լճում և այնտեղ թափվող գետերում ձկան և խեցգետնի որսը/կից խորհրդակցության հղումը՝ <http://www.mnp.am/?aid=4656/>:

Սակայն այսօր Գավառի շուկայում այցելություն իրականացնելու արդյունքում արձանագրեցինք ձկան անարգել վաճառքի մի քանի դեպքեր /կից լուսանկարը, անհրաժեշտության դեպքում կտրամադրենք էլի նկարներ/: Նման դեպքեր արձանագրվել են նաև մայրաքաղաքի տարբեր թաղամասերում, Վարդենիս-Երևան ավտոճանապարհին, փաստորեն նախարարի թիվ 320-Ս հրամանը հերթական անգամ և հերթական տարին չի գործում:

Հաշվի առնելով վերոնշյալը և Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն.

1. Ովքե՞ր են պատասխանատու Սևանը գոտևորող բոլոր անտառային ճանապարհներում հսկիչ կետերի տեղակայման հարցում /տրամադրել համապատասխան որոշումը/,

2. Ե՞րբ են իրականացվել "Սևան" ազգային պարկի տարածքից լողամիջոցների, որսագործիքների և ժամանակավոր կացարանների դուրս բերումը /տրամադրել փաստեր/,

3. Ե՞րբ և ո՞վ է սահմանել շուրջօրյա հերթապահություն՝ մշտական կապ պահպանելով իրավապահ մարմինների հետ /տրամադրել համապատասխան որոշումը/,

4. Ե՞րբ և ու՞մ կողմից է արգելվել բոլոր տեսակի որսագործիքների և լողամիջոցների մուտքը Սևանա լիճ /տրամադրել համապատասխան հրամանը, որոշումը/:

5. Որ կառույցներն են պատասխանատու Լիճք, Վարդենիկ, Մաքենիս և Մասրիկ գետերի ավազանում գտնվող Լիճք, Վարդենիկ, Ախպրաձոր, Մաքենիս, Լճավան, Սոթք, Կարճաղբյուր, Ներքին Շորժա, Ջաղացաձոր, Գեղամաբակ, Ակունք, Պատվան, Խաչաղբյուր, Լուսակունք, Տորֆավան համայնքների բնակչության հետ համապատասխան բացատրական աշխատանք տանելու հարցում, ու սկսվե՞լ են արդյոք այդ աշխատանքները /տրամադրել գրաֆիկը/:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:
Հարգանքով,

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող՝



Լ. Ասոյան

